ԿԱԶՄՎԱԾ է 23.06.2018թ

ԸՆԴՈՒՆՎԱԾ է
«ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ
«23» հունիսի 2018 թ .

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝
---ԱՆԱՀԻՏ ԵՂՈՅԱՆ

ՏՊԱԳՐՎԱԾ է 2 ՕՐԻՆԱԿ
ՕՐԻՆԱԿ 2
ԳՐԱՆՑՎԱԾ է

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Գրանցման ամսաթիվ 24.08. 2018թ.
Գրանցման համար 21.172.1033925
ՀՎՀՀ 00914314

05

«ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔ»

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Հայոց Հայրենիք» կուսակցության /ՀայՀԿ/

Ծ Ր Ա Գ Ի Ր Ը

«Հայոց Հայրենիք» կուսակցության (այսուհետև՝ ՀայՀԿ) գաղափարախոսության հիմքը Ազգի և Հայրենիքի հավիտենականության անհերքելի սկզբունքների վրա հենված փիլիսոփայությունն է:

Ընդունելով համամարդկային համընդհանուր արժեքները՝ Հայ ՀԿ-ն առաջ է քաշում դրանք հայերիս հոգեկերտվածքի պրիզմայով անցկացրած տեսնելու, և մեզ ու մեր Հայրենիքին հատուկ պարագաներում արտացոլելու պարտադիր անհրաժեշտությունը:

ՀայՀԿ-ն չի խրախուսում արևելքում կամ արևմուտքում ընդունված նորմերի մեխանիկական տեղայնացումը Հայաստանի Հանրապետությունում, միևնույն ժամանակ մերժում է այլ երկրներում կուտակված առաջադիմական փորձի կիրառման բացառումը Հայստանում:

ՀայՀԿ-ի նպատակը հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելն է:

ՀայՀԿ-ն իր գործունեության գերխնդիրն է համարում.

- ՀՀ անկախ պետականության ամրապնդումն ու զարգացումը, նրա տարածքային ամբողջականությունը,
- ՀՀ բոլոր քաղաքացիների լիակատար իրավահավասարությունը՝ անկախ ազգային, կրոնական, դավանանքի ու ռասսայական պատկանելության,
- ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը,
- ՀՀ ազգաբնակչության քաղաքական կամքի ազատ ձևավորման և արտահայտման հնարավորության ապահովումը,
- ՀՀ-ում ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության ամրապնդումը,
- Իրավական և սոցիալական պետության կերտումը,

- ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի գերակայության ապահովմանն աջակցելը,
- ՀՀ-ում համամարդկային և ազգային արժեքների ներդաշնակումը, մարդու իրավունքների, ազատությունների, անվտանգ ու արժանապատիվ կյանքի երաշխավորվածությունը, Պետության կառավարման համակարգի արդյունավետությունը,
- Օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հավասարակշիռ տարանջատ և անկախ գործունեության ապահովումը,
- Միջազգային ինտեգրացիոն գործընթացին մեր երկրի ակտիվ մասնակցությունը,
- Այլ երկրների հետ շահավետ քաղաքական, տնտեսական, մշակութային հարաբերությունների հաստատումն ու զարգացումը,
- Ազգային անվտանգության դոկտրինայի մշակումն ու իրագործումը,
- Տնտեսական գործընթացում պետության կարգավորիչ դերի հստակեցումն ու ուժեղացումը, տնտեսական հարաբերությունների կարգավորող իրավական դաշտի բարելավումը՝ երաշխավորելով ազատ մրցակցության և գործարար ակտիվության զարգացումը՝ փոքր և միջին սեփականատերերի և տնտեսվարող սուբյեկտների գործունեության խրախուսումը: Բանկային համակարգի գործունեության խրախուսումը: Բանկային համակարգի գործունեության ուղղորդումը մանր ու միջին գործարարության /բիզնեսի/ դաշտ՝ արտոնություն շնորհելու քաղաքականությամբ նման գործունեության խրախուսումը: Ներդրումների համար անվտանգ ու բարենպաստ պայմանների ապահովմամբ ռիսկային աստիճանի իջեցումը նվազագույնի: Սոցիալական շուկայական տնտեսության ձևավորումն ու ամրապնդումը:
- Յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքի իրավունքի փաստացի ապահովումը,
- Սեփականության իրավունքի անձեռնմխելիությունը:

ՀայԿՀ-ն Հայաստանի Հանրապետությունը ընդունում է որպես ողջ հայության նպատակների իրականացման հիմական և ամենաարդյունավետ միջոց, նրա հուսալի և կայուն կենսագործունեության գրավական, Հայոց հարցի լուծման ամենազորեղ կռվան ու հայ ժողովրդի պահանջատիրության լիազոր և լիակատար իրավասու:

Պետական կառավարման կառույցների ձևը, կախված իրականացվող խնդիրների առաջնայնությունից, կարող է փոխվել պետության զարգացման տարբեր փուլերում, իսկ գործունեությունը պետք է հիմնված լինի ազգային, զարգացման ծրագրերի, անվտանգության հայեցակարգերի վրա, որոնք պետք է հստակորեն սահմանեն այդ գործունեության նպատակներն ու դրանց հասնելու միջոցները: Կառույցների ձևի ընտրության չափանիշը նրա արդյունավետության փաստն է: Պետությունը պետք է աջակցի քաղաքական կառույցների զարգացմանը, լիարժեք բազմակուսակցական համակարգի կայացմանը՝ խթանելով ժողովրդավարության հիմունքների վրա քաղաքացիական հասարակության ձևավորումը:

Հայաստանի Հանրապետությունը բոլոր հայերի հայրենքին է: ՀայՀԿ-ն կողմնակից է Հայաստանի Հանրապետությունում երկքաղաքացիության մասին օրենքի ընդունմանը: «Հայոց Հայրենիք» կուսակցությունը որպես նպատակ ունի ոչ միայն արտագաղթի կանխումը, այլև հայրենադարձությունը: ՀայՀԿ-ն պայքարելու է սփյուռքում յուրաքանչյուր հայի հայ մնալու համար, և հնարավոր ամեն ինչ անելու է սփյուռքահայության շրջանում հայոց լեզվի իմացության, հայ ժողովրդի և Հայաստանի պատմությանը գոնե ծանոթացման, հայ գրականության և մշակույթի տարածման ուղղությամբ: Այս գործում ՀայՀԿ-ն պատրաստ է համագործակցել պետական մարմինների, Հայաստանի և սփյուռքի հասարակական, քաղաքական կազմակերպությունների, կուսակցությունների և օտար, բայց հայամետ անհատների ու կազմակերպությունների հետ: